ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

«Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար «ԻԿՎԾԻԿ-ԳՀԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գրենական պարագաների և տնտեսական ապրանքների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան,	10 նոյեմբերի 2025թ.,
Մ. Խորենացի 162ա	ժամը 12:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Էմիլ Ղազարյան
Հանձնաժողովի անդամներ՝	Կառլեն Գևորգյան
	Գեղամ Արեյան
	Սոնա Եսայան
Հանձնաժողովի քարտուղար՝	Աննա Մարգարյան

1. **Տեղեկություններ հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են ք. Երևան, Մ. Խորենացի 162ա հասցեում՝ 10 նոյեմբերի 2025թ.-ին, ժամը 12:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրը.**

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը Էլ.փոստ, հեռ.համար
1.	«Սմարթլայն» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 110	ssmartline@mail.ru 055300093

3. **Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

«Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտ պարունակող ծրարը կազմված է գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

4. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարում հրավերով նախատեսված փաստաթղթերը առկա են: Բոլոր ներկայացված փաստաթղթերը կազմվել են բնօրինակից և 1 օրինակ պատճեններից:

5. **Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

«Սմարթլայն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմվել են հրավերով սահմանված պահանջներին համապատասխանում:

6. **Տեղեկություններ հրավերի վերաբերյալ ստացված հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին.**

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

7. Տեղեկություններ մասնակիցի ներկայացրած գնային առաջարկների մասին.

N	Ապրանքի անվանումը	Գնման գինը թվերով	Մասնակիցներ	**Արժեք** (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ**	Ընդհանուր գինը
1.	Թուղթ՝ գունավոր պատճենահանման համար՝ A4 ֆորմատի, 300 գ.	6 000	-	-	-	-
2.	Թուղթ գունավոր պատճենահանման համար SRA3	30 000	-	-	-	-
3.	Թղթապանակ կոշտ կազմով (ռեգիստրատոր)	32 500	«Սմարթլայն» ՍՊԸ	14 583.33	2 916.67	17 500 Տասնյոթ հազար հինգ հարյուր
4.	Կարիչ, 20-50 թերթի համար	12 000	«Սմարթլայն» ՍՊԸ	6 000.00	1 200.00	7 200 Յոթ հազար երկու հարյուր
5.	Հակակարիչ	560	«Սմարթլայն» ՍՊԸ	433.33	86.67	520 Հինգ հարյուր քսան
6.	Գրիչ գնդիկավոր	10 000	«Սմարթլայն» ՍՊԸ	5 833.33	1 166.67	7 000 Յոթ հազար
7.	A4 թղթապանակ ռեզինով	16 000	«Սմարթլայն» ՍՊԸ	10 416.67	2 083.33	12 500 Տասներկու հազար հինգ հարյուր
8.	Դռան փական	20 000	-	-	-	-

8. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ «ԻԿՎԾԻԿ-ԳՀԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին՝ 3-7-րդ չափաբաժինների մասով:
- Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ԻԿՎԾԻԿ-ԳՀԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 1-2-րդ և 8-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:
- Հաստատել «ԻԿՎԾԻԿ-ԳՀԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի 1-2-րդ և 8-րդ չափաբաժինները չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը (կցվում է):
- Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի՝ անգործության ժամկետ չսահմանել:
- Հաստատել «ԻԿՎԾԻԿ-ԳՀԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

- Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեղեկագրում հրապարակմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Էմիլ Ղազարյան

Անդամներ՝ _____ Կառլեն Գևորգյան

_____ Գեղամ Արեյան

_____ Սոնա Եսայան

Քարտուղար՝ _____ Աննա Մարգարյան